

կուսաստանաց մէջ ալ կ'երեւի նոյն չորակերութիւնը, դատելով Ազաթանգեղոսի մէկ վկայութենէն, որ Հոփսիմեանքն «ընդակերս» կը կոչէ (113). եւ զոր մեք կընանք ուրիշ հայ կուսանաց մասին եւս առնուլ: Եւ արդարեւ մեծին Ներսեսի օրով մեր կուսանք կ'անցնեն «ի պահս», որ հոմանիշ է նախորդին. եւ իրենց այդ սնունդը կ'ընդունին «յաշխարհէ եւ յիւրաքանչիւր ընտանեաց» (Փաւս. 228): Շուշանիկ խորշելով իւր ուրացող ամուսնէն, կըօնաւորական զգեստ կը հագնի եւ կը ճգնի նոյնպէս «պահօք եւ աղօթիւք» (Սով. Թ, 31): Նոյն էր յոյն հաւատաւորաց սնունդն ալ. «Բանջարիկ ինչ կամ հաց լոկ կամ ոսպն կամ այլ ինչ դեղահունդք, թէ բեւեկն, թէ ձիթապտուղ կամ թուզ» (Ոսկ. Թղթ. Ա, 815):

Կը կրկնեմ՝ թէ այդ խստամբեր սնունդը կամաւոր էր. այնպէս որ ի կանոնէ արգելուած էին կըօնաւորաց՝ միսն ու գինին միայն, ինչպէս էր Յունաց քով եւս<sup>1</sup>:

1. Ոսկերերան անոնց սնունդը կը կոչէ «չորաբեկ սեղան», ուր չկան «ոչ խորտիկք, ... ոչ հոտ ճենճերոյ, եւ ոչ համադամք կերակրոց, այլ ոմն հացիկ եւ աղիկ, եւ ոմանք իւղիկ եւս յաւելուն». տկարք «բանջարիկ եւս խառնեն, եւ դեղահունդս եւ ոսպնեայս» (Թղթ. Ա, 127). եւ կ'ըմպեն լոկ «ջուր» (Մաթ. Բ, 67): Տես եւ վարք Հրց. Ա, 585. Բ, 552, եւն.